

ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՈՆԻ

Ա. Տ Ա Բ Ի

„Եւ ուսուչիք որդւոց ձերոց
իօսել զոսա ի նստել ի տան.
Եւ ի գնալ ի ճանապարհ եւ
ի ննջել եւ ի յառնել“:

Վ. Պավ. Ժո. 19.

ՀԱՄԱՉԱՐԵ ՖՐԵԳՔ ՀԱԳԻԽՈՅ ԻՇԽԱՆԱԼԻԹԵՐԵ

ԵՐԿՐՈՐԴ/ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Printed in Turkey

Կ ա զ մ ե ց

Ս Ա Հ Ա Կ Վ Ա Հ . Ս Ա Հ Ա Կ Ե Վ Ա Յ

(Միաբան Մողնւոյ Ա. Գևորգ Եկեղեցւոյ)

արմար է կրօնուսոյցներին ծեռքի տակ ունենալ իս
Դասապիրը կրօնից հասոր Ա. մասն ա. եւ բ.

ТИФЛИСЬ

Tipografia N. A. Martirosianca, Orobekian, ul. d. № 1-2.

1893

2(075)
3-15

2(075)
4-15

5
5

ԳԱՍՏԵՏՐ ԿՐՈՆԻ

Ա. Տ Ա Ր Ի

Printed in Turkey

„Եւ ուսուսջիք որդւոց ձեզոց
լոսել զսսա ի նատել ի տան.
եւ ի գնալ ի ճանապարհի եւ
ի ննջել եւ ի յառնել“:

V. Պռվ. Ժ. 19.

ՀԱՄԱՁԱՅՆ ԺԲԵԳԻ ՀԱԳԵՒԱՐ ԽԹԽԱՌԻԹԵԱՆ


ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ ա զ մ ե ց

Ս Ա Հ Ա Կ Ք Ա Հ Ս Ա Հ Ա Կ Ե Ա Ն Ց

(Վիաբան Սողնւոյ Ա. Գեորգ եկեղեցւոյ)

Յարմար է կրօնուսոյներին ծեռքի տակ ունենալ իմ
(Գասագիրը կրօնի) հատոր II. մասն ա. եւ բ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ ՅՈՎԱՆՈՒՔ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

1893

407849 - 42

Дозволено цензурою Тифлисъ 2-го Августа 1893 г.



109

39

Հ Ր Ա Մ Ց Ն Ո Ւ

ՏԵՂԱԿԱԼԻ ԿԱԹՈՒԳԴԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶԱՆ Ե Ր Ե Մ Ի Ա Վ Պ ԽՈՎՈՎՈՍԻ

Յ Ա Ն Կ

§.	Երես.
1.	Աստուած կանչում է Աբրահամին
2.	Աստուած յիշում է իւր խոստումը
3.	Աւետումն Քրիստոսի
4.	Քրիստոսի Ծնունդը
5.	Տասն և երկու տարեկան Յիսուսը գը. նում է տաճար
6.	Յիսուսի մկրտութիւնը
7.	Մարիամ և Մարթա
8.	Յուդա
9.	Ոտնալուաց
10.	Խորհրդաւոր ընթրիք
11.	Յիսուս Գեթսեմանի պարտիզում
12.	Յիսուսի մատնութիւնը
13.	Յիսուս քահանայապետի առաջ
14.	Յուդայի մահը
15.	Յիսուս Պիղատոսի առաջ
16.	Յիսուսի խաչելութիւնը
17.	Թաղումն
18.	Յիսուսի յարութիւնը
	5.
	6.
	7.
	8.
	11.
	13.
	15.
	17.
	18.
	20.
	23.
	24.
	24.
	25.
	26.
	28.
	32.
	33.

§ 1.

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Կ Ա Ն Հ Ա Խ Մ Է Ա Բ Բ Ա Հ Ա Մ Ի Ն

Խառան քաղաքում մի մարդ էր ապրում՝ անունն Աբրահամ: Նրա հայրը և բոլոր խառնցիները կուռք էին պաշտում, իսկ ինքը ճշմարիտ Աստուծուն: Մի անգամ Աստուած ասաց Աբրահամին. «Թող քո հայրենիքը, բարեկամները, հօրդ տունը և գնա այն երկիրը, որ ես քեզ ցուց կտամ. ես քեզ կօրհնեմ. քո որդիկներից մինը դուրս կդայ և կօրհնէ երկրիս վրայի բոլոր աղղերին»:

Աբրահամը հեռանում է Խառանից: Այս բանից յետոյ Աբրահամն իսկոյն դուրս եկաւ Խառանից. Հետն առաւ իւր կին Սատային, եղբօրդի Ղովտին, ծառաներին, իւր հարցստութիւնը և գնաց Քանանացւոց աշխարհը, որն Աստուած խոստացել էր նրան:

Երբ Աբրահամը Քանան հասաւ, Աստուած նորից երևեցաւ նրան և ասաց... «Այ, սա է

այն երկիրը, որ ես քեզ խոստացայ. այս երկիրը
տալիս եմ քեզ և քո որդւոց»:

Արբահամն այնտեղ մի սեղան շինեց, գոհ
բերաւ Աստուծու համար և շնորհակալութիւն
արաւ:

§ 2.

ԱՍՏՈՒԾՅ ՅԻԳՈՒՄ Է ԻՒՐ ԽՈՍՏՈՒՄԸ

Աստուած Արբահամին խոստացել էր, որ
նրա որդկերանցից մինը դուրս կգայ և կօրհնէ
երկրիս վրայի բոլոր ազգերին:

Այդ օրից անցել էր երկու հազար տա-
րի: Աշխարհիս բոլոր մարդիկը վատացել էին
այնպէս, ինչպէս մի ժամանակ Խառանի բնա-
կեչներն էին:

Աստուած մարդկանցը շատ էր սիրում.
Քանի քանի անգամ մարդարէներ ուղարկեց,
որ իրատեն, բայց մարդիկը չլսեցին նը-
րանց: Աստուած լիշեց իւր խոստումը և ու-
ղարկեց իւր միակ որդի Յիսուս Քրիստոսին,
որովհետև նա միախն կարող էր չար մարդկանց
բարի դարձնել:

Լսեցէք, հիմա ես պիտի պատմեմ, թէ
Աստուած ինչպէս ուղարկեց իւր որդուն:

§ 3.

ԱԿԵՏՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍՈՒ

Արբահամի բնակած երկրում, մի քաղաք
կար՝ անունը Նազարէթ: Այնտեղ կենում էր մի
կոյս աղջիկ, որի անունը Մարիամ էր: Նա շատ
բարի էր և ամեն ժամանակ Աստուծուն աղօ-
թում էր: Դրա համար էլ Աստուած նրան ընտ-
րեց, որ Յիսուս Քրիստոսի մայրը լինի:

Թի անգամ երբ Մարիամն աղօթում էր,
Գաբրիէլ Հրեշտակը երևաց նրան և ասաց.
«Ուրախացիր, Մարիամ, Աստուած քեզ հետ է»:
Երբ Մարիամը Հրեշտակին տեսաւ, վախեցաւ
ու մտածում էր իւր մտքում, թէ ինչու հա-
մար է Հրեշտակն իրա մօտ գալիս և ողջունում:
Հրեշտակն ասաց. «Մի՛ վախիր, Մարիամ, Աս-
տուած քեզ շատ է սիրում, դու մի որդի
կունենաս և նրա անունը Յիսուս կդնես. նա
Աստուծու որդի կկոչուի և բոլոր մարդկանց
փրկիչը կլինի»:

Մարիամը չհակառակեց: Նա խոնարհ կեր-
պով պատասխանեց և ասաց. «Ես Աստուծու
աղախինն եմ, ինչպէս նրա կամքն է, թող
այնպէս էլ կատարուի»: Այս պատասխանից յե-
տոյ Հրեշտակը հեռացաւ Մարիամից:

Գաբրիէլ հրեշտակի Մարիամ կուսին ա-
ւետիք տալը՝ տօնում ենք ապրիլ ամսի եօթին։
Այդ տօնի անունն է Աւետումն։

§ 4.

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԴԸ

Հին ժամանակ, երբ թագաւորներն ու-
զում էին իմանալ, թէ իրանց երկրի մէջ քանի
մարդ կայ, հրամայում էին որ ամեն մարդ գնայ
իւր հայրենի քաղաքը և ապա սկսում էին հա-
մարել։ Այսպիսի մի հրաման էլ դուրս եկաւ
թագաւորից՝ հէնց այն ժամանակներում, երբ
Յիսուս Քրիստոսը պիտի ծնէր։

Յիսուսի ծնողները՝ Յովուէփն ու Մարիամը
կենում էին Նաղարէթ քաղաքում։ Բայց որով-
հետև Յովուէփը Բեթղեհէմցի էր, այդ պատճա-
ռով վերկացաւ և շտապով եկաւ իւր հայրենի
քաղաքը։ Յովուէփն աղքատ էր. քաղաքի մէջ
չկարողացաւ տուն վարձել, զգրա համար էլ
վերեկաւ քաղաքից դուրս մի այրի մէջ, ուր
հովիւները վատ եղանակին իրանց ոչխարներն
էին ըերում։

Այդ գիշեր Յիսուսը ծնաւ. Ծնողները խան-
ձարուրի մէջ փաթաթեցին և մորի մէջ դրին։

Բեթղեհէմը մեր երկրի նման ցուրտ չէ,
այնտեղ տաք է—ձմեռը գրսում կարելի է քնել։
Այն երկրի հովիւները ամառ ձմեռ իրանց ոչ-
խարները դուրսն են պահում, միայն անձրւալին
եղանակին այրն են բերում։

Երբ Յիսուս ծնաւ, ոչ ոք չգիտէր, հովիւ-
ները դաշտումն էին և իրանց ոչխարներն էին
արածացնում։ Այդ ժամանակ օդի մէջ հրեշտակ
երևադ։ Այս բանից հովիւները վախեցան։ Հրեշ-
տակն ասաց. «Մի վախենաք, ես ձեզ և բո-
լոր մարդկանց մեծ ուրախութիւն եմ յայտ-
նում—ձեզ համար Բեթղեհէմում փրկիչ է ծը-
նել։ Կա այրումն է. խանձարուրով պատաժ է
և մորի մէջ դրած»։ Այս խօսքերից յետոյ՝ յան-
կարծ մի խումբ հրեշտակներ երևացին, որոնք
երգում էին և ասում. «Փառք ի բարձունս
Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ՚ի մարդիկ
հաճութիւն»։—փառք Աստուծուն երկնքումը,
այսուհետև երկրիս վրայ խաղաղութիւն և
մարդկանց մէջ ուրախութիւն կիխնի։

Այնուհետև հրեշտակները հեռացան։ Հո-
վիւներն ասացին մէկ մէկու. «Դնանք Բեթղեհէմ
և տեսնենք այս ինչ բան է, որ Աստուծ ցոյց
տուաւ մեղ»։ Նրանք շտապով եկան և գտան
Մարիամին, Յովուէփին և մանկանը խանձա-
րուրով փաթաթած ու մորի մէջ դրած։ Երբ

տեսան, փառք տուին Ստուծուն և ամեն պատահողի պատմում էին և ասում, որ մեզ համար փրկիչ է ծնել:

Յիսուսի ծնունդը կատարում ենք յունուացի վեցին:

Տ Ա Ղ Ծ Ն Ն Գ Ե Ա Ն:

Այսօր տօն է ծննդեան, աւետիս,
Տեառն մերոյ եւ յայտնութեան, աւետիս:

Այսօր մեր Տիրոջ ծննդեան տօնն է, աւետիս,
Այսօր մեր Տիրոջ յայտնութեան տօնն է, աւետիս:

Այսօր սուրբ կոյսն անապական, աւետիս:
Ժնաւ, եռեր զանման արքայն, աւետիս:

Այսօր մաքուր սուրբ կոյսը ծնաւ, աւետիս,
Եւ բերաւ անմահ թագաւորին, աւետիս:

Այսօր հրեշտակը յերկնից իջան, աւետիս:
Հնո՞ւ մեզ օրհնեն զանման արքայն, աւետիս:

Այսօր հրեշտակները երկնքից իջան, աւետիս,
Մեզ հետ օրհնում են անմահ թագաւորին, աւետիս:

Ջ Ա Ր Ա Կ Ա Ն Ծ Ն Ն Գ Ե Ա Ն:

Խորհուրդ միծ եւ սկանչելի,
Որ յայսմ աւուր յայտնեցաւ,
Հովիւք երգեն ընո՞ւ հրեշտակս՝
Տան աւետիս աշխարհի:

Մեջ և զարմանալի խորհուրդ է, որ այսօր յայտնուեց—հովիւները հրեշտակների հետ երգում են և աշխարհին աւետիք տալիս:

Ճնաւ նոր արքայ
Ի Բեթղեհէմ քաղաքի,
Որդիք մարդկան օրհնեցէք,
Զի վասն մեր մարմնացաւ:

Նոր թագաւոր ծնաւ Բեթղեհէմ քաղաքում,
մարդկանց որդիք, օրհնեցէք, որովհետև նա մեզ համար ծնաւ:

Ամրաւելին երկնի եւ երկրի
Ի խանձարուս պատեցաւ,
Ոչ մեկնելով ՚ի չօրէ
՚ի սուրբ այրին բազմեցաւ:

Նա, որի համար երկինքն ու երկիրը բաւական չեն, բարուրի մէջ փաթաթուեց. Հօրիցն անբաժան մնալով սուրբ այրի մէջ բազմեց:

§ 5.

ՏԱՄԱՆԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՅԻՍՈՒՍԸ ԳՆՈՒՄ Է ՏԱՁԱՐ

Հրէաները մեզ նման ամեն քաղաքում կամ գիւղում եկեղեցիներ չունեին, ամբողջ երկրի մէջ մի հատ տաճար կար, այն էլ Յըրուսաղէմ քաղաքումն էր: Դրա համար ամեն տարի անթիւ

ուխտաւորներ էին գալիս, մանաւանդ Զատկի տօնին: Ուխտաւորներն այնքան շատ էին լինում, որ քաղաքի մէջն այլ ևս տեղ չէր լինում, քաղաքից դուրս՝ լեռների վրայ վրաններ էին խփում: Տօնը եօթն օր էր տևում:

Յիսուսի ծնողներն էլ Զատկի տօնին ամեն տարի ուխտ էին գնում: Եթբ Յիսուս տասներկու տարեկան դարձաւ, նրան էլ հետները տարան: Այս առաջին անգամն էր, որ Յիսուս գնում էր Աստուծու տունն աղօթելու:

Տաճարից վերադառնալը: Տօնի օրերն անցան: Ծնողները կամենում էին Նազարէթ դառնալ, բայց յանկարծ տեսան, որ Յիսուս մանուկն այլ ևս չկայ: Քաղաքի մէջ երկար փնտուեցին, բայց իզուր: Կարծում էին թէ ծանօթների հետ Նազարէթ դարձած կլինի, դրա համար մի օրուայ ճանապարհ եկան. գտան իրանց ծանօթներին. Հարց ու փորձ արին, տեսան որ չկայ: Նորից յետ դարձան Երուսաղէմ: Մի օր էլ այստեղ փնտուեցին և հազիւ երրորդ օրը տաճարում գտան:

Յիսուսն այստեղ վիճաբանում էր վարդապետների հետ—նրանց հարցեր էր տալիս և պատասխանում առաջարկած հարցերին: Ամեն-

քըն էլ զարմանում էին նրա իմաստուն պատասխանների վրայ:

Ծնողներն այս որ տեսան, շատ ուրախացան: Մայրն ասաց: «Որդենակ, այդ ինչ բերիք մեր գլխին. Հայրդ և ես այս երեք օր է քեզ ենք փնտուում»: Յիսուս պատասխանեց. «Միթէ չգիտէիք, որ ես իմ հօր տանը կլինեմ»: Սրանից յետոյ Յիսուս ծնողների հետ Նազարէթ դարձաւ, հնազանդ էր և լսում էր նրանց խօսքը:

Փոքրիկ մանուկներ, դուք էլ Յիսուսի նման պիտի սիրէք Աստուծու տունը և հնագանդ լինէք ձեր ծնողներին:

§ 6.

Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ւ Ւ Ն Բ

Յիսուս գալիս է Յովհաննիսի մօտ: Յորդանան գետի ափերում մի իմաստուն մարդ էր բնակուում՝ Յովհաննէս անունով: Մարդիկ ամեն կողմից սրա մօտ էին գալիս, խորհուրդ էին հարցնում և խոստովանում էին իրանց սխալները: Ով իւր սխալները խոստովանում և խոստանում էր այլ ևս չկրկնել, Յովհաննէսը

նրան լողացնում՝ մկրտում էր Յորդանանի մէջ։ Սրանով Յովհաննէսն ուղում էր ասել, ինչպէս որ ես մարմինը մաքրեցի, այնպէս էլ դուք ձեր սրտերը պիտի մաքրէք։

Յիսուս ևս եկաւ Յովհաննիսի մօտ մը- կրտուելու։ Դեռ չէր մօտեցել Յիսուս, Յով- հաննէսը հեռուից ճանաչեց նրան և բարձր ձայնով ասաց իւր մօտ կանգնողներին. «Ահա զալիս է Աստուծու դառը, սա պէտք է մար- դոց ազատէ իրանց մեղքերից»։

Յիսուս մօտեցաւ Յովհաննիսին և յայտ- նեց, որ կամենում է նրանից մկրտուել։ Յով- հաննէսը մերժեց և ասաց. «Ես պէտք է քե- զանից մկրտուեմ, դու ես ինձ մօտ դալիս»։ Յիսուս պատասխանեց. «Մկրտիք ինձ, որովհե- տեւ դու տարիքով ինձնից մեծ ես»։ Սրանից յետոյ Յովհաննէսը չհակառակեց և մկրտեց Յիսուսին Յորդանան զետի մէջ։

Հջաշք։ Երբ Յիսուս մկրտուեց և ջրից դուրս եկաւ, երկինքը բացուեց. սուրբ Հոգին աղաւնու կերպարանքով իջաւ Յիսուսի վրայ. երկինքը բացուեցաւ և ձայն եկաւ, որ ասում էր. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հաւա- նեցի, դրան լսեցէք»։ Ճատ քիչ մարդիկ գիտէ- ին, որ Յիսուս Սստուծու որդին էր, բայց այժմ

պարզ կերպով տեսան և հաւատացին, որ Քրիս- տոս Աստուծու որդին է։ Դրա համար էլ մկրտու- թեան օրը՝ մարդիկ իրար շնորհաւորում են և ասում. «Ճնորհաւոր յախնութիւն»։

Յիսուսի մկրտութեան տօնն ամենայն տարի կատարում ենք յունվարի վեցին։

§ 7.

ՄԱՐԻԱՄ ԵՒ ՄԱՐԹԱ

Յիսուս ըժշկում՝ է։ Յիսուս իւր մկրտ- ութիւնից յետոյ սկսեց շրջել երկրի մէջ և ամեն տեղ քարոզում՝ էր և բժշկում—կոլրե- րին աչք էր տալիս. կաղերին՝ ոտք. խուլերին՝ լսողութիւն և մեռելներին՝ յարութիւն։ Ով տիսուր էր, մխիթարում էր. հարուստներին ասում էր, որ իրանց ունեցածից աղքատներին էլ բաժին հանեն։ Վատ մարդկանց խրատում էր, որ լաւանան, ապա թէ ոչ Աստուած կապատէ։ Այսպէս Յիսուս օր ու գիշեր հանգիստ չունէր, շրջում էր ամեն տեղ և քարոզում էր մարդկանց, որ վատ բաներից հեռանան և լաւ բաներ անեն։ Ինչոր խօսքով քարո- զում էր, նոյնը գործով ցոյց էր տալիս։

Սյսպէս՝ մի անգամ Յիսուս քարոզելով
եկաւ իւր ծանօթ Ղազարոսի մօտ, որ կենում
էր բեթանիա գիւղում Երուսաղէմին մօտիկ: Այս
Ղազարոսը երկու քոյր ունէր, մինի անունն էր
Մարիամ, իսկ միւսինը՝ Մարթա: Երկու քոյրերն
էլ Յիսուսին շատ էին յարգում: Երբ իմացան,
որ Յիսուս հիւր է եկել, էլ չգիտէին, թէ ինչ-
պէս պատիւ տան նրան: Մարիամը նստեց Յի-
սուսի մօտ և ուշադրութեամբ լսում էր նրա
քարոզները: Յիսուսի խօսքերն այն աստիճան
դուր եկաւ Մարիամին, որ նա ամենայն ինչ
մոռացաւ: Իսկ մարթան մեծ պատրաստութեան
մէջ էր—աշխատում էր, որքան կարելի է, լաւ
կերակուրներ պատրաստել Յիսուսի համար:

Պարթան երբ տեսաւ, որ Պարիհամը չի
դալիս իրան օգնելու, դարձաւ Յիսուսին և
բարեկամաբար ասաց. «Տէ՛ր, չե՞ս տեսնում, որ
քոյք ինձ մենակ է թողել, ասա, որ դայ և
ինձ օգնէ»: Յիսուս պատասխանեց. «Պարթա,
Պարթա, դու շատ բաներով ես զբաղլում, քիչն
էլ բաւական է: Դու կարող ես քո քոյք Պա-
րիհամից օրինակ կերցնել, նա աւելի լաւ ձևով
է պատւում ինձ, նա լսում է իմ քարոզները—
ով ինձ ուղղում է յարգել, թնդ իմ խօսքերը լսէ:

Սրանով Յիսուս ուզում է ասել, որ Ամ-

ըիսամի չափ լսենք, իսկ Պարթայի նման աշխատասէր լինենք:

88

30 h 9 u

Յիսուս ունէր 12 աշակերտներ. Նրանք
կոչւում են առաքեալներ: Աշակերտներից մինը,
որի անունը Յուդա էր, լաւ մարդ չէր, փառ
շատ էր սիրում: Վի անգամ սա ծածուկ գնաց
քահանայապէտների մօտ և ասաց. «Ինձ բնէ
կտաք, որ Յիսուսին ձեզ մատնեմ»: Նրանք էլ
երեսուն արծաթ փող խոստացան: Յուդան
որոնում էր մի յարմար օր, որ Յիսուսին մատնէ
թշնամիների ձեռը:

Յիսուս զիտէր այս բանը, սակայն ոչինչ
էր ասում, աշխատում էր մի ձեռվ զգուշացնել
աշակերտին: Բայց ի գուրք:

Զատկի տօնը մօտեցել էր. Յիսուս տեսաւ,
որ Յուդան պիտի մատնէ և իւր մահը մօտե-
նում է, աղեց մի անգամ էլ իւր բոլոր աշա-
կերտների հետ միասին Զատկի ընթրիքն ուտել
և մի անգամ էլ ցոյց տալ, թէ որքան սիրում
է նրանց:



§ 9.

Ո Տ Ն Ա Լ Ո Ւ Յ Ց

Աւագ հինգշաբթի օրը Յիսուս պատուիրեց իւր աշակերտներին, որ մի վերնատան մէջ ընթրիք պատրաստեն: Երեկոյեան երը Յիսուս սեղան նստաւ տասն երկու աշակերտների հետ, ասաց. «Սրտով ցանկացայ այս ընթրիքը ձեզ հետ ուտել՝ չարչարելուց առաջ»: Այս ասելուց յետոյ, Յիսուս ընթրիքից վեր կացաւ. Հանեց վերևի շորերը. մէջքին մի դենջակ կապեց. Չուրն ածեց կոնքի (աւազան) մէջ և սկսու աշակերտների ոտները լուանալ ու այն դենջակով օրբել: Ոտները լուանալուց յետոյ ընթրիքի նստաւ և տխուր ձայնով ասաց իւր աշակերտներին: «Ձեզանից մինն այս զիշեր պիտի ինձ մատնէ»: Յիսուս սրանով վերջին անգամ կամենում էր իրան մատնող աշակերտին զղուշացնել, բայց ի գուրք: Յուրան այնպէս էր ցոյց տալիս իրան, որպէս թէ ինքը չէ մատնողը և ոչինչ չգիտէ:

Աշակերտներն այս խօսքի վրայ տրտմեցան և միմեանց երեսին էին նայում, չգիտէին թէ ում հումար է ասում: Ամեն մէկն առանձին առանձին տեղից վեր էր կենում և ասում.

«Տէր, միթէ ես եմ»: Յիսուս պատասխանեց. «Վայ այն մարդուն՝ որ կմատնէ ինձ, աւելի լաւ էր, որ նա խսկի ծնուած չլինէր»: Այն ժամանակ Յուդան էլ ասաց. «Պիթէ ես եմ, վարդապետ»: Յիսուս պատասխանեց. «Դու ես տառմ»: Յետոյ աւելացրեց, «գնա, ինչ որ անելու ես, շուտով արա»: Յուդան երբ տեսաւ, որ իւր մատնութիւնը զիտէ Յիսուս, ամօթից էլ չկարողացաւ մնալ այնտեղ, վերկացաւ և գնաց Յիսուսի թշնամիների մօտ: Երեկոյ էր – մթնել էր:

Աւագ հինգշաբթի օրը քահանան եկեղեցում կատարում է ոտնալուալի կարգը և կարագ իւղ է բաժանում:

Ք Ա Ր Ա Կ Ա Ն Ո Տ Ն Ա Լ Ո Ւ Յ Ց Բ

Այսօր կանգնեցաւ առաջան մկրտութեան ՚ի թողութիւն մեղաց մերոց:

Մկրտութեան աւազանն այսօր հաստատուեցաւ մեր մեղքերի թողութեան համար:

Այսօր Տէրն մեր լուանայր զրուս աշակերտաց եւ պատուիրէր զայս ասելով:

Այսօր մեր Տէր Յիսուսը լուանում էր աշակերտների ոտները և պատուիրելով ասում էր.

Մի ոմն ՚ի ծէնջ, ասէ, եղբարք, մատնելոց
է զիս ՚ի մահ եւ որոշի յաշակերացդ:

«Ձեզանից մէկը, եղբարներ, ինձ մահուան
պիտի մատնէ և բաժանուի (հեռանաց) աշա-
կերտներիցդ:

Զայն լուեալ Պետրոսի ակնարկէր առ
Յովհաննէս, հարցանէլ թէ ով իցէ:

Այս որ լսեց Պետրոսը, նայեց Յովհաննիսին՝
հարցնելու, թէ ով կարող է լինել դա:

Բանն զոր ասաց Յիսուս, տրտմեցոյց զիս
յաշակերտսն եւ խոռվեցան ամենեքնան:

Այս խօսքը որ ասաց Յիսուս, իւր աշակերտնե-
րին տրտմեցրեց և ամենքը շփոթուեցան:

§ 10.

Խ Ո Բ Հ Բ Դ Ա Խ Ո Բ Ը Ն Թ Ր Ի Գ

Երբ Յուգան դուրս գնաց, Յիսուս ասաց.
«Ձեզ մօտ երկար չեմ կարող մնալ, նոր խրտա-
եմ տալիս ձեզ — դուք իրար այնպէս պիտի
սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի — սրանով
ձեզ կճանաչեն, որ դուք իմ աշակերտներն էք»:

Յիսուս կամեցաւ իւր մահուանից յետոյ
մի այնպիսի լիշտակի թողնել, որ երբ ինքն
այլ ևս երկը վրայ չի լինիլ, իրան միշտ լի-

շեն: Ուստի ընթրիքից յետոյ առաւ բաղարջ
հաց. օրհնեց. կտրեց. աշակերտներին բաժա-
նեց և ասաց. «Առէք, կերէք այս է իմ մարմինը»:
Յետոյ մաքուր գինին առաւ. գոհացաւ. տուաւ
նրանց և ասաց. «Խսմեցէք դրանից ամենքդ,
սա իմ արիւնն է, որ թափւում է ձեր և շատ
ուրիշների մեղքին թողութիւն տալու համար
— ամեն անդամ, երբ խմէք այս բաժակից,
լիշեցէք ինձ»:

Պատարագ: Վենք էլ այժմ ամեն տէրու-
նական և տօն օրերին սուրբ պատարագ ենք
մատուցանում. զնում ենք եկեղեցի. քահանային
խոստովանում ենք և պատարագից յետոյ ըն-
դունում սուրբ հաղորդը բաղարջ հացի և գի-
նու օրինակով: Սա միևնույնն է, ինչ որ Յի-
սուս վերնատանը կատարեց:

Պատարագին շատ երգեր են երգում,
բայց նրանցից մի քանիսը միայն կսովորենք:

Յամենայնի օրհնեալ ես Տէր, օրհնեմք
զքեզ, զովեմք զքեզ, զոհանամք զքէն, աղաշեմք
զքեզ, տէր Աստուած մ'եր:

Ամեն բանի մէջ օրհնուած ես, Տէր, օրհ-
նում ենք զքեզ (որովհետեւ մեզ համար շատ բա-

րութիւններ ես արել); գովում ենք քեզ (որո՞ն հետև գու չարչարուեցար և մեզ համար խաղաղութիւն բերիր), գոհանում ենք քեզնից, աղաջում ենք քեզ, մեր տէր նատուած:

Միայն սուրբ. միայն տէր. Յիսուս Քրիստոս. ի փառս Աստուծոյ Հօր. ամէն:

Մի միայն Սուրբը մի միայն Տէրը, Յիսուս. Քրիստոսն է՝ Հօր Աստուծու փառքովը. ամէն

Ամէն, Հայր սուրբ, Որդիո սուրբ, Հոգիո սուրբ: Օքնութիւն Հօր եւ Որդույ եւ սրբոյ Հոգույն, այժմ՝ եւ միշտ յափտեանս յափտեաց: ամէն:

Ամէն: Սուրբ Հայր, սուրբ Որդի, սուրբ Հոգի: Օքնութիւնը լինի Հօրը, Որդուն և սուրբ Հոգուն՝ այժմ և միշտ և յափտեանս յափտեանից. ամէն:

Աստուծ մեր եւ Տէր մեր Երեւեցաւ մեզ օքնեալ, Եկեղեց անուամբ Տե սոն:

Պեր Աստուածը, մեր Տէրը Երեւեցաւ մեզ՝ Տիրոջ անունով Եկողն օքնեալ լինի:

Եղիցի անուն առեան օքնեալ յայս՝ հետէ մինչեւ յափտեան:

Աստուծու անունն օքնեալ լինի այժմեանից սկսած մինչեւ յափտեան,

§ 11.

Յ Ի Ս Ո Ւ Ս Գ Ե Թ Ս Ե Մ Ա Ն Ի Պ Ա Ր Տ Ի Զ Ա Կ Ի Մ

Հացն օրհնելուց յետոյ Յիսուս իւր աշակերտների հետ միասին դուրս եկաւ Երուաղէմից և բարձրացաւ Զիթենեաց լեռուը: Այստեղ Յիսուս ասաց աշակերտներին. «Ինձ պիտի բըռնեն, իսկ դուք ամենքդ էլ կթողնէք ինձ և կփախչէք»: Աշակերտներն ամենքն էլ միաբերան ասացին. «Աւելի շուտով կմեռնենք՝ քան թէ քեզ կթողնենք և կփախչենք»:

Զիթենեաց լեռան կողքին մի պարտէղ կար՝ Գեթսեմանի անունով: Յիսուս այստեղ եկաւ և ասաց իւր աշակերտներին. «Խստեցէք այստեղ. աղօթեցէք. արթուն կացէք, որ փորձութեան մէջ ընկնէք», իսկ ինքը մի փոքր առաջ գնաց. երեսի վրայ ընկաւ և այսպէս էր աղօթում. «Հայր, եթէ կարելի է, այս նեղութիւնը (բաժակը) հեռացրու ինձանից, բայց ոչ թէ այնպէս, ինչպէս ես եմ ցանկանում, այլ ինչպէս դու»: Յիսուս աղօթքից դարձաւ և տեսաւ, որ աշակերտները քնել են և նորից ասաց. «Որթուն կացէք և աղօթեցէք, որ փորձութեան մէջ ընկնէք»: Այս ասաց և դարձեալ գնաց աղօթելու և նոյն խօսքերն . էր կրկնում և

օգնութիւն խնդրում հօրից: Յիսուս դարձաւ և
աշակերտներին էլիք քնած զոտ ու ասաց.
«Քանի քնէք, հասաւ ժամը, երբ Յուդան ինձ
պիտի մատնէ. վեր կացէք գնանք, ահա
դալիս է նա»:

§ 12.

Յ Ի Ս Ո Ւ Ս Ւ Մ Ե Տ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

Արանից յետոյ՝ Յուդան բազմաթիւ զինու-
որներավ ներս մտաւ պարաէզ՝ սրերով, ջահերով
և լապտերներով: Եկողները Յիսուսին չէին ճա-
նաչում: Յուդան նշան էր տուել, թէ ումը որ
համբուրեմ, նա է, նրան բռնեցէք»: Մատնիչը
մօտեցաւ Յիսուսին, համբուրեց և ասաց. «Բարե
վարդապետ»: Յիսուս պատասխանեց. «Յուդա,
համբուրելով ես մատնում ինձ»: Այն ժամանակ
մօտեցան Յիսուսին, բռնեցին և կապեցին, իսկ
աշակերտները թողին և փախտն:

§ 13.

Յ Ի Ս Ո Ւ Ս Վ Ա Ն Ե Ց Ե Պ Ե Տ Ի Ա Ռ Ա Զ

Յիսուսին կապած տարան քահանայագե-

տի մօտ, ուր ժողոված էին Քրիստոսի թշնա-
միները, որ Յիսուսի համար մահու պատիք նշա-
նակեն: Քրիստոս ի հարկէ արդար էր, նա
Աստուած էր. բացի լաւութիւնից ոչ մէկին վա-
տութիւն չէր արել, բայց նրա թշնամիներն ու-
զում էին, որ մեղաւոր դուրս բերեն, որպէս զի-
կարողանան սպանել, դրա համար պատրաստե-
ցին սուտ վկաներ, որոնք հաստատում էին,
որպէս թէ Յիսուս Աստուծուն հայհոյել է, ժո-
ղովրդին խաբում է և թագաւորի ընդէմ
բաներ է խօսում: Հրէաների օրէնքով, եթէ
ապացուցանէին, որ մինը Աստուծուն հայհոյել
է, այնպիսի մարդք մահու պատիք էր ստա-
նում: Այստեղ թքեցին Յիսուսի երեսին. բընց-
քով ծեծեցին. ծաղրեցին և մինչև լուսանալը
չարչարեցին:

§ 14.

Ո Ւ Դ Ա Յ Ե Մ Ե Յ Ա Ռ Ա Զ

Յուդան երբ տեսաւ, որ իւր մատնու-
թիւնով Յիսուսի հսմար մահու պատիք նշա-
նակեցին, զղաց. խիղճը տանջեց իրան. վեր
առաւ երեսուն արծաթը. յետ տուաւ քահա-
նայագետներին և ասաց. «Ես մեղք զործեցի,

անմեղ արիւն մատնեցի»։ Նրանք էլ պատասխանեցին, թէ մեզ ինչ, դու դիտես, ինչ ուզում ես արա»։ Այս ժամանակ Յիսուսն փողը գէն ձգեց, և դնաց խեղդուեց, որովհետեւ քանի լիշում էր Յիսուսի արած լաւոթիւնները և իւր վատութիւնը, չգիտէր, թէ ինչ անէր, քուն չունէր, դադար չունէր։

§ 15.

ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԸԹԱԶ

Հինգշաբթուայ գիշերն էր, որ հրէաները Յիսուսի համար մահուան վճիռ նշանակեցին, իսկ լուսաբացին՝ ուրբաթ առաւօտեան՝ կապած վեր առան, տարան Պիղատոս դատաւորի մօտ, որպէս զի իրանց վճիռը հաստատէ, որովհետեւ հրէաները իրաւունք չունէին մահու վճիռ տալու—երկրի մէջ ամենից մեծ դատաւորը Պիղատոսն էր։

Պիղատոսը դուրս եկաւ նրանց մօտ և ասաց. «Ի՞նչ դանդատ ունիք այս մարդու դէմ»։ Նրանք պատասխանեցին. «Սա ժողովրդին մոլարեցնում է, արդելում է կայսեր հարկ տալ և իրան թագաւոր է անուանում»։ Այս որ լսեց Պիղատոսը՝ Յիսուսին ներս տարաւ սենեակը,

քննեց և տեսաւ, որ բոլորն էլ սուտ է—նախանձում են, որ Յիսուս իրանցից լաւ է քարոզում և իրանց սխալները բռնում է ու ժողովրդին ցոյց է տալիս։ Պիղատոսը դուրս բերաւ Յիսուսին և յայտնեց ժողովրդին, որ ինքը ոչինչ յանցանք չէ զտնում նրա մէջ։

Քահանայապէտները և ժողովուրդը սկսցին աղաղակել և ասել. «Եթէ դու մեր վճիռը չես հաստատի, մենք կայսեր դանդատ կտանք»։ Պիղատոսը վախեցաւ այս բանից—մէկ որ կայսրից վախենում էր և մէկ էլ չէր ուզում մի մարդու համար երկրի մեծամեծ մարդկանց նեղացնել։ Ուստի վեր առաւ ջուր, ձեռները լուաց և ասաց. «Ես Յիսուսին մեղաւոր չեմ դտնում. նրա արեան մէջ իմ ձեռը չեմ թաթախի. դուք գիտէք, տարէք, և խաչեցէք»։ Այս բանի վրայ ժողովուրդը սկսեց միաբերան աղաղակել և ասել. «Թօնդ դրա արիւնը մեր և մեր որդւոց զլիսին լինի»։

Ճ. Ա. Բ. Կ. Ա. Ն. Մ. Ա. Տ. Ն. Ո. Խ. Թ. Ե. Ա. Ն

Դի զիշերին յորում մասնիւր Փրկիչն մեր ի մահ խաչին, ել՝ ի լեռն Զիթենեաց՝ աղօթելով զայս ասէր. Հայր, անցո յինչն զբաժակս։

Այն գիշեր, երբ մեր Փրկիչը պիտի մատնուէր խաչի վրաց մեռնելու, Զիթենեաց լեառը բարձրացաւ և աղօթելով այս էր ասում. «Հայր, հեռացրու ինձանից այս բաժակը (նեղութիւնը)»:

Խոկ անօրէն աշակերտին թողեալ զգութ սիրոյ նորա՝ փուլմայր առ քահանայս եւ ասէր. ինձ զինչ կամիք տալ, զի մատնեցից զվարդապեսն:

Խոկ անօրէն աշակերտը մոռանալով Յիսուսի սէրն ու գութը շտապում էր քահանայսպետի մօտ և ասում. «Ի՞նչ կտաք ինձ, որ վարդապետին (Յիսուսին) ձեր ձեռը մատնեմ»:

Ժողովեալ հրէիցն՝ կշռեցին արծաթ քառում. Առեալ տարան առ Պիղատոս, ասեն. ՚ի խաչ հան, ի խաչ, զի հայրոյիշ է օրինաց:

Հրէաները հաւաքուեցան, շատ արծաթ կցուեցին, տարան Պիղատոսի մօտ և ասացին. «Խաչիր, խաչիր գրան, որովհետև հայնոյում է (չէ հաւանում) մեր օրէնքները»:

§ 16.

Յ Տ Ս Ո Ւ Ւ Ի Ա Զ Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

Երբ Յիսուսին խաչելու հրամանն առան հրէաները, ուրբաթ առաւօտ զինուորները վեր առան Յիսուսին և տարան, որ խաչն: Յիսուս

ինքն էր տանում իւր խաչափալտը. նա շատ էր յոգնել, որովհետև ամբողջ հինգշաբթի գիշեր էէր քնել, ուստի ճանապարհին վայր ընկաւ խաչի տակ:

Երուսաղէմի մէջ մի բլուր կար՝ տնունը Գողգոթա, որոշեցին, որ Յիսուսին այստեղ խաչեն:

Երբ Գողգոթա հաս սն, Յիսուսին խաչեցին – նրա ձեռները և ոտները փալտի վրայ մեխեցին: Խաչի վերևում մի տախտակ կպցրին, որի վրայ Պիղատոսը դրել էր տուել Յիսուսի յանցանքը, որ ամենքը կարդան և իմանան, թէ ինչու են պատժում Յիսուսին: Տախտակի վրայ գրած էր – «Յ ի ս ո ւ ս ՚ ն ա զ ո վ ր ե ց ի Թ ա գ ա ւ ո ր ՚ չ ը է ի ց»:

Թէւ թշնամիները նախանձից խաչել տուին, բայց Յիսուս էլի աղօթում էր նրանց համար և խնդրում էր հալր Աստուծուն, որ ներէ նրանց: Զինուորները և հրէաները ծաղրում էին Յիսուսին և ասում էին. «Եթէ դու Աստուծես, եթէ դու հրէաների թագաւորն ես, ինչու չես ազատում քեզ»:

Յիսուսի խաչի մօտ էին կանգնած իւր մայրը և իւր աշակերտ Յովհաննէսը: Յիսուս ցաւում էր մօր վրայ, ուստի Յովհաննէսին յանձնեց, որ պահէ, պահպանէ իւր մօրը: Այն

օրից ոկասձ՝ Պարիամ Աստուածածինը Յովհաննիսի մօտն էր:

Փամբ տասն երկուսին երկրի վրայ խաւար իջաւ: Ժամբ երեքին՝ ճաշից յետոյ Յիսուս ասաց. «Ճարաւի եմ»: Զինուորներից մինը խղճաց նրան, սպունգը քացախի մէջ թաթախեց և Յիսուսի շրթունքին մօտեցրեց, որ ճաշակէ և ցաւը մեղմէ, որովհետեւ այդ խմելիքը փոքր ինչ թմրեցնում է:

Սրանից յետոյ՝ Յիսուս բարձր ձայնով ասաց. «Հայր, հոգիս քեզ եմ յանձնում»: Այս ասաց, գլուխը խոնարհեց և հոգին աւանդեց:

Այդ միջոցին երկիրը շարժուեց, ժայռերը պատառուեցան և շատ զերեզմաններից արդար մարդիկ յարութիւն առան: Այս որ տեսան, ամենքը լաց էին լինում և ասում էին, ուղիղ որ Յիսուս արդար էր և Աստուծու որդի, մենք նրան իզուր խաչեցինք:

ԵՐԳԻ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ

Խաչի քո Քրիստոս երկիրապահնեմք եւ զուրբ խաչելութիւնդ քո մ'ծացուցանեմք. եւ զուրբ թաղումդ քո փառատրեմք:

Քրիստոս, քո խաչին երկրապութիւն ենք տալիս և քո սուրբ խաչելութիւնը մեծացնում ենք

(յարգում ենք), իսկ քո սուրբ թաղումը փառաւորում ենք:

Եկայք հաւատացեալք, երկրապահնեցոյք Քրիստոսի Աստուծոյ մերոյ, վասն զի եկն ի ծեռն խաչին իւրոյ շնորհեաց զպարզեա աշխարհի:

Եկէք, ով հաւատացեալներ, երկրապութիւն տանք մեր Քրիստոս Աստուծուն, որովհետեւ նա եկաւ և իւր խաչովն աշխարհիս պարզեններ շնորհեց:

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր (Աստուած), սուրբ և անմահ (Աստուած), գու որ մեզ համար խաչուեցիր, ողորմիր մեզ:

Փառք սուրբ թաշին, ալէլուիա. Խաչելութեանդ, ալէլուիա, սրբոյ թաղմանդ, ալէլուիա:

Փառք քո սուրբ խաչին, ալէլուիա, (օրհնեցէք Աստուծուն), փառք խաչելութեանդ, ալէլուիա, փառք սուրբ թաղմանդ, ալէլուիա:

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց եւ ետուր ուրախութիւն սրտից մերոց:

Քո երեսի լոյսը փայլեց մեզ վրայ (շնորհ տուիր մեզ) և մեր սիրտն ուրախացրիր:

՚ի պտղոյ, ցորենոյ, գինոյ եւ ձիթոյ իրեանց լցուցեր զնոսա:

Ինչպէս ցորէնի, գինու և ձիթոյ առատութեան ժամանակը (տարիները):

§ 17.

ԹԱՂՈՒՄՆ

Աւբաթ երեկոյեան գէմն էր, միւս օրը՝ շաբաթ հրէաների Զատիկն էր—եթէ Յիսուսին խաչի վրայ տեսնէին, Հանդիստ սրտով հաց չէին ուտի, ուստի գնացին Պիղատոսի մօտ և խընդրեցին, որ իրաւոնք տայ մարմինը խաչի վրայից վերցնելու: Պիղատոսը երբ իմացաւ, որ Յիսուս արդէն մեռել է, իրաւոնք տուաւ:

Զինուորներից մինը կամեցաւ ճիշտ իմանալ Յիսուսի մահը, դրա համար գեղարդով կողը ծակեց, որտեղից արիւն և ջուր բղիւց: Սրանից յետոյ Յօվոէլի անունով մի իշխան մարդ, որ ծածուկ աշակերտ էր Յիսուսին, եկաւ Պիղատոսի մօտ և խնդրեց որ Յիսուսի մարմինն իրան տան: Պիղատոսը տուաւ սրան Յիսուսի մարմինը: Մի ուրիշ աշակերտ էլ՝ Նիկողիմոս

անունով, եկաւ և բերաւ անուշահոտ բաներ: Սրանցով օծեցին Յիսուսի մարմինը և կտաւով պատեցին, ինչպէս որ հրէաների սովորութիւնն էր:

Այնտեղ՝ ուր Յիսուսին թաղեցին, մի պարտէզ կար, պարտիզումն էլ մի նոր փորած գերեզման: Ահա այստեղ դրին Յիսուսի մարմինը և մի մեծ քար էլ գլորեցին դրանն ու զնացին:

§ 18.

ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Ճարաթ օրը հրէաները ոչ մի բանի ձեռք չեն տալիս, սրա համար էլ, երբ շաբաթ օրն անցաւ, կիւրակէ առաւօտը վաղ, դեռ արեւը չծագած, Յիսուսին հետևող կանայքը—Մարիամ Պակթաղենացին և ուրիշները, զանազան տեսակ անուշահոտ խնկեր պատրաստեցին և եկան, որ Քրիստոսի մարմինն օծեն:

Կանայքը ճանապարհին ասում էին միմեանց. «Ով կդլորէ մեզ համար գերեզմանի բերնի մեծ քարը»: Բայց երբ մօտեցան, տեսան որ քարը դէն էր ձգած գերեզմանի բերանից: Կանայքից մինը վագեց աշակերտների մօտ իմաց տալու այս բանը, իսկ միւս երկուը գե-

ըեզմանը մտան և տեսան, որ մի երիտասարդ
հրեշտակ նտած է գերեզմանի աջ կողմում՝
սպիտակ շորերով: Կանայք վախեցան: Հրեշտակն
ասաց նրանց. «Մի վախենաք, դիտեմ, որ դուք
խաչուած Յիսուսին էք որոնում: Ինչու էք կեն-
դանին մեռելների մէջ փնտում: Նա ալստեղ
չէ, յարութիւն առաւ: Գնացէք, ասացէք նրա
աշակերտներին, որ Յիսուս իրանցից առաջ կզայ
Գալիլիա, դուք այնտեղ կդտնէք նրան, ինչպէս
որ ինքն առաջուց ասել էր»:

ԶԱՐԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Յարեաւ /Քրիստոս ի մեռելոյ, ալէլուիա,
Եկայք ժողովուրդ, երգեցէք տեան, ալէլուիա:

Քրիստոս ի մեռելոց յարութիւն առաւ, ա-
լէլուիա, Եկէք ժողովուրդ, տիրոջ համար երդ ա-
սացէք, ալէլուիա:

Յարուցելոյն ի մեռելոց, ալէլուիա,
Որ զաշխարհն լուսաւորեաց, ալէլուիա:

Ի մեռելոց յարութիւն առնողին, ալէլուիա,
Օրհնենք այն Նստուածը. որ լուսաւորեց մեր
աշխարհը:

Խաչի քո Քրիստոս երկրապանեմք եւ

զուրք թաղումի քո մեծացուցանեմք, եւ
զուրք յարութիւնդ քո փառաւորեմք...

Փառք սուրբ խաչի, ալէլուիա,
Սքրոյ թաղմանդ, ալէլուիա,
Սուրբ յարութեանդ, ալէլուիա:

Քրիստոս յարեաւ՝ ի մեռելոց. մահուամք
զման կոխեաց եւ յարութեամքն իւրով մեզ
զեանս պարզեւեաց, նման փառք յաւիտեանս
ամէն:

Քրիստոս ի մեռելոց յարութիւն առաւ. (իւր)
մահով յաղթեց մահուան, իսկ յարութիւնով մեզ
կեանք պարզեւեց. նրան փառք լինի յաւիտեանս.
ամէն:

Փառք քեզ տէր Աստուած մեր:

Փառք քեզ, մեր տէր Աստուած:

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի
անուն քո. Եկեսցէ արքայութիւնն էո. Եղիցին
կամք քո որպէս յերկինս եւ յերկրի. զհաց
մեր հանապազորդ տուր մեզ այսօք. Եւ թող
մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեր թողումք
մերոց պարտապանաց եւ մի տանիք զմեզ

Ե փորձութիւն, այլ փրկեա զմբեզ ի չարէ.
զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք
յափտեանս. ամէն:

Սեր հացր, որ երկնքումն ես. քո անունը սուրբ
լինե. քո թագաւորութիւնը գայ. քո կամքը լինի
ինչպէս երկնքումը, նոյնպէս էլ երկրի վրայ. մեր
ամենօրեայ հացը տուր մեզ այսօր. մեր պարտքը
թող մեզ, ինչպէս որ մենք էլ մեր պարտապաննե-
րին ենք թողնում. մի ձգիր մեզ փորձանքի մէջ,
այ չարիցն ազատիր, որովհետև թագաւորութիւնը,
զօրութիւնը և փառքը քոնն է յափտեանս. ամեն,



2013

<<Ազգային գրադարան



NL0211804

իմ աշխատութիւններն ստանալ ցանկացողները կարող
են գիմել՝ 1) Տիֆլուս; արմանյան քաղաքացիութեան համար
Սաաքանց, 2) Կենդրանական գրաֆանառանց:

Ա Տ Ա Բ Ի Ե Ն Գ Ր Ձ Ա Ն			Ան- կազմ	Կազ- մած
	Բ.	Կ.		
ՈՒՍՈՒՑՉԱՑ ՀԱՄԱՐ				
1. Դասագիրք կրօնի հին-ուխտ . . .	1	75	1	95
2. Դասագիրք կրօնի նոր-ուխտ մ. I .	1	—	1	20
3. Դասագիրք կրօնի նոր-ուխտ մասն II. տետր. Ա	—	35	—	55
4. Դաս զիբք կրօնի նոր-ուխտ մասն II. տետր Բ. Գ	—	70	—	90
5. Մի քանի խօսք հայ կրօնուսուցնե- րին	—	10	—	22
ԱՇԱԿԵՐՏԱՑ ՀԱՄԱՐ				
6. Սրբազն պատմովթիմ հին-ուխտ բ. տիպ V. տարի	—	40	—	52
7. Սրբազն պատմովթիմ նոր-ուխտ բ. տիպ IV. տարի	—	40	—	52
8. Դասատեսք կրօնի	—	30	—	42
9. Դասատեսք կրօնի	—	20	—	32
10. Դասատեսք կրօնի	—	15	—	27

Ամսապարհածախար ինձ գրաց չէ;

Ինձ գիմողները կստանան 20% զիջումն: